ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 60

«02» 07 2020 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 77 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազությունում «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության վարման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017 թվականի հունիսի 15-ի N 45 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 77 հրամանով սահմանված վիճակագրական հաշվետվությունների ձևերը լրացնելու և ներկայացնելու գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության դատախազությունում «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության վարման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017 թվականի հունիսի 15-ի N 45 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 77 հրամանով սահմանված կարգում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) 101-րդ կետում «53-րդ» բառերը փոխարինել «52-րդ», «24-րդ» բառերը՝ «25-րդ», իսկ «75-րդ» բառերը՝ «32-րդ» բառերով,

2) 256-րդ կետի 4-րդ ենթակետում «33-48-րդ» բառերը փոխարինել «33-47-րդ» բառերով,

3) 256-րդ կետի 5-րդ ենթակետում «49-51-րդ» բառերը փոխարինել «48-50-րդ» բառերով,

4) 256-րդ կետի 6-րդ ենթակետում «52-րդ» բառերը փոխարինել «51-րդ» բառերով,

6) 257-րդ և 309-րդ կետերում «53-րդ» բառերը փոխարինել «52-րդ», իսկ «1-52-րդ» բառերը՝ «1-51-րդ» բառերով,

7) 261-268-րդ կետերում «53-րդ» բառերը փոխարինել «52-րդ» բառերով,

8) 316-րդ կետում «5-6-րդ» բառերը փոխարինել «5-7-րդ» բառերով,

9) 316-րդ կետի 1-ին ենթակետում «պետական գույքին» բառերը փոխարինել «պետությանը պատճառված գույքային վնասի չափը» բառերով,

10) 316-րդ կետի 2-րդ ենթակետում «իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքին (6-րդ սյունակ) պատճառված գույքային վնասի չափերը» բառերը փոխարինել «Համայնքներին պատճառված գույքային վնասի չափը (6-րդ սյունակ)» բառերով,

11) 316-րդ կետը լրացնել 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառված գույքային վնասի չափը (7-րդ սյունակ)»,

12) 317-րդ կետում «5-րդ և 6-րդ» բառերը փոխարինել «5-7-րդ» բառերով,

13) 318-րդ կետում «7-րդ» բառերը փոխարինել «8-րդ», իսկ «8-9-րդ» բառերը՝ «9-11-րդ» բառերով,

14) 318-րդ կետի 1-ին ենթակետում «պետական գույքին (8-րդ սյունակ)» բառերը փոխարինել «պետությանը պատճառված գույքային վնասի վերականգնված չափը (9-րդ սյունակ)» բառերով,

15) 318-րդ կետի 2-րդ ենթակետում «Իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքին (9-րդ սյունակ) պատճառված վնասի վերականգնման չափերը» բառերը փոխարինել «Համայնքներին պատճառված գույքային վնասի վերականգնված չափը (10-րդ սյունակ)» բառերով,

16) 318-րդ կետը լրացնել 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառված (11-րդ սյունակ) գույքային վնասի վերականգնված չափը»,

17) 319-րդ կետում «8-րդ և 9-րդ» բառերը փոխարինել «9-11-րդ», իսկ «7-րդ» բառերը՝ «8-րդ» բառերով,

18) 320-րդ կետում «10-րդ» բառերը փոխարինել «12-րդ», իսկ «11-րդ» բառերը՝ «13-րդ» բառերով,

19) 321-րդ կետում «12-րդ» բառերը փոխարինել «14-րդ», իսկ «13-րդ» բառերը՝ «15-րդ» բառերով,

20) 337-րդ և 338-րդ կետերում «1-23-րդ» բառերը փոխարինել «1-24-րդ» բառերով,

21) 338-րդ և 341-348-րդ կետերում «24-րդ» բառերը փոխարինել «25-րդ» բառերով,

22) 355-րդ կետում «1-24-րդ» բառերը փոխարինել «1-25-րդ» բառերով,

23) 471-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

24) 472-րդ կետում «75-րդ» բառերը փոխարինել «32-րդ», իսկ «1-74-րդ» բառերը՝ «1-31-րդ» բառերով,

25) 475-482-րդ կետերում «75-րդ» բառերը փոխարինել «32-րդ» բառերով,

26) 489-րդ կետում «1-75-րդ» բառերը փոխարինել «1-32-րդ» բառերով,

27) 491-րդ կետը «համապատասխան» բառից հետո լրացնել «, և ելնելով կոռուպցիոն բնույթի հանցագործությունների առանձնահատկություններից, լրացվում է նաև

«բռնագրավված գույքի չափի» և «բռնագանձված գույքի չափի» մասին սյունակները, որոնք առկա են միայն սույն բաժնում:» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ